ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ապրիլի 2014թ. թիվ 149-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԸՆՏԱՆԻՔԻ ՏԱՐԻ
ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՏԱՐՎԱ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 3-ի N 356-Ա որոշման 3-րդ և 4-րդ կետերի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզում հայտարարել Ընտանիքի տարի՝ նպատի ունենալով 2014 թվականի ապրիլի 7-ից 2015 թվականի ապրիլի 7-ը ընկած ժամանակահատվածը:

2. Հաստատել Ընտանիքի տարվա կապակցությամբ Լոռու մարզում անցկացվող միջոցառումների ցանկը՝ համաձայն հավելվածի:

3. Հանձնարարել մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետին, առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին, քաղաքաշինության վարչության պետին, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին, տեղական ինքնակառավարման և ՀԳՄ հարցերով վարչության պետին, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետին, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետին և առաջարկել մարզի համայնքի ղեկավարներին՝ ապահովել սույն որոշմամբ հատատված միջոցառումների իրականացումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. ապրիլի 22
ք.Վանաձոր